

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

XIX դարի հասարակական միտքը ստեղծեց բազմաթիվ նոր գիտություններ, մյուս կողմից՝ արդեն գոյություն ունեցող մի շարք ընդհանուր գիտություններից առաջացան մասնակի գիտություններ. մասնավորապես ընդհանուր պատմագիտությունից անջատվեցին և ինքնուրույն գիտության աստիճանի հասան իրար հետ սերտորեն կապված հնագիտությունն ու արձանագրագիտությունը:

Ինչպես ամեն մի գիտություն, արձանագրագիտությունն էլ մինչև ինքնուրույն գիտական լիակատար ստանալը ունեցել է իր երկարատև նախապատրաստական շրջանը:

Նկատի չառնելով ավելի հին շրջաններում եղած մասնակի աշխատանքները (արձանագրություններն օգտագործելու դեպքեր), պետք է ասել, որ արձանագրագիտության իսկական հիմքը դրվեց Վերածնության դարաշրջանում: «Արձանագրագիտության հայր» է համարվում իտալացի Կիրիակո Անկոնացին (1391—1452): Այդ մեծ և անխոնջ հումանիստը շրջում է ամբողջ Հունաստանը, փոքրասիական հունական քաղաքները, Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, նկարագրում է իր հանդիպած հուշարձանները և արտագրում նրանց վրա պահպանված արձանագրությունները: «Արձանագրագիտության հոր» վարակիչ օրինակին հետևելեցին շատ ուրիշներ, որոնց ջանքերով այնքան մեծ նյութ հավաքվեց, որ արդեն 1603 թ. Հեյդելբերգի համալսարանի պրոֆեսոր Գրուտերը կազմեց իր հայտնի ժողովածուն, որը պաշտոնական է 12 հազար արձանագրություն (հիմնականում լատինական):

Պատմության և մշակույթի լուրջ բնագավառների համար անսպառ և թարմ նյութեր պարունակող այդ հսկայական ժողովածուն մեծ հետաքրքրություն առաջացրեց ամբողջ եվրոպայում, և բազմաթիվ գիտնականներ սկսեցին զբաղվել նոր արձանագրություններ հայտնաբերելու և հրատարակելու գործով. միաժամանակ Ֆրանսիայում կազմակերպվեց հատուկ «Արձանագրությունների ակադեմիա», իսկ Անգլիայում և այլ երկրներում հատուկ «ընկերություններ» այդ նույն նպատակներով:

Մինչև XIX դարը, սակայն, արձանագրագիտությունը ինչպես նաև հնագիտությունը համարվում էին ընդհանուր պատմությանը օժանդակող ճյուղեր միայն, չէին մշակված այդ դիսցիպլինների ուսումնասիրության և հավաքման հատուկ մեթոդներ, չկային այդ նպատակների համար մասնավորապես պատրաստված և հատկապես միայն դրանցով զբաղվող մասնագետներ: Այդ աշխատանքները վերապահված էին XIX դարին: Այդ դարի պրպտող գիտական միտքը ոչ միայն մեծ թվով նոր արձանագրություններ հայտնաբերեց, այլև պարզեց, որ նախորդ դարերում հավաքված հսկայական արձանագրական նյութն ունի լուրջ թերություններ. հավաքված լինելով ոչ մասնագետների ձեռքով և ոչ միատեսակ մեթոդներով, եղած հրատարակությունները մեծ չափերով տարբերվում էին թե՛ իրարից և թե՛, մանավանդ, բնագիր սկզբնաղբյուրներից: Կարիք զգացվեց մշակել արձանագրությունների հավաքման հատուկ և ընդհանուր մեթոդ. հավաքված հսկայական նյութի ի նորո ստուգումը և նոր նյութերի հավաքման անհրաժեշտությունը միատեսակ ձևի կիրառմամբ արդեն այնքան բարդ աշխատանքներ էին, որ գծվար էր նրանց համատեղել այլ աշխատանքների հետ. անհրաժեշտաբար առաջացավ մի նոր մասնագիտություն՝ արձանագրագիտությունը:

Միաժամանակ նախկինում հայտնի միայն հունական և լատինական արձանագրություններին կողքին ավելացան Արևելքի բազմաթիվ այլ հին ժողովուրդների արձանագրական նյութերը, ինչպես եգիպտական, սիրիական, ասորա-բաբելոնական, հնդկական և ուրիշներ: Այս հանգամանքն էլ իր հետքին խթան հանգիստացավ, որ ընդհանուր արձանագրագիտությունը բաժանվի առանձին ժողովուրդների մասնակի գիտության իր հասուի աշխատողներով:

Այսպիսով, ճյուղավորված, գիտական հիմքերի վրա դրված և հասուի մեթոդներով ու մասնագետներով զինված նոր գիտությունը՝ արձանագրագիտությունը ձևավորվեց և զարգացավ և պատմական, լեզվական ու բանասիրական մանրակրկիտ ուսումնասիրությունների ենթարկելու յուրաքանչյուր հին ժողովրդի յուրաքանչյուր արձանագրական նյութերը: Արդյունքը եղավ փայլուն, կազմվեցին, հրատարակվեցին ու դեռևս շարունակվում են հրատարակվել հունական, լատինական, սեմական, ուրարտական և այլ բազմաթիվ ժողովուրդների արձանագրությունների մեծահատոր ժողովածուները՝ կորպուսները: Այժմ այդ կարևոր գործը կատարվում է անվանի գիտնականների ձեռքով և ակադեմիկոսների միջոցներով:

★ * ★

Հայերեն արձանագրությունները որպես պատմական ու մշակութային սկզբնաղբյուրներ օգտագործելու, հավաքելու ու հրատարակելու գործն ունի իր պատկանելի անցյալը:

Ի պատիվ հայ պատմագրական մտքի, պետք է նշել, որ դեռևս մեր հին մատենագիրներից ոմանք նիշտ են հասկացել Հայաստանում գտնված օտար և հայ լեզուներով պահպանված արձանագրությունների մեծ արժեքը և օգտագործել են իրենց աշխատություններին մեջ: Գիտական այսպիսի մոտեցման վաղագույն փորձի պատիվը պատկանում է հայոց պատմահայր Մովսես Խորենացուն: Իր հայտնի «Պատմության» մեջ Խորենացին որպես սկզբնաղբյուրներ, օգտագործել է իր ժամանակ Հայաստանի տարբեր մասերում պահպանված, տարբեր լեզուներով գտնվող արձանագրություններ՝ արամեերեն և հունարեն:

Անպագիտ ուրարտերենը Խորենացու ժամանակ արդեն մեռած լեզու էր և անմատչելի որևէ մեկի համար, բայց և այնպես պատմագիրը հասկացել է նրանց գիր լինելու հանգամանքը: Ավանդարտ Շամիրամին վերագրելով ուրարտական շրջանից մնացած բոլոր հուշարձանները, այդ թվում նաև Վան քաղաքի և Վանի (Շամիրամի) շրանցքի կառուցումը, պատմագիրը Վանի մոտ գտնվող ժայռի վրայի սևագիր արձանագրությունները համարում է այդ հսկա շինությունների առթիվ գրված հիշատակագրություններ: Ահանատես զենոնի անմիջական տպավորությամբ և գեղեցկորեն նկարագրելով այդ իրոք մեծագործ կառուցումները և սևագիր հիշատակագրությունների դժվարությունն ու զարմանալու արժանի գեղեցկությունը, նա ավելացնում է.

«Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»¹:

Եթե Խորենացին անձանոր սևագրերի միայն փաստն է հիշատակում և կոսհում նրանց նշանակությունը, ապա իրեն համար մատչելի ու հասկանալի արամեերեն ու հունարեն արձանագրություններն օգտագործում է արդեն իրենց իսկական բովանդակությամբ՝ պատմա-մշակութային երևույթներ վեր հանելու նպատակով: Արտաշես թագավորի գործունեության ընդհանուր նկարագրությունից հետո, նրա կարևոր ներքին գործունեության, երկրի ներսում սահմաններ նշելու փաստը պատմագիրը երևան է հանում Արտաշեսի կողմից կանգնեցրած սահմանաքարերի վրա գրված արամեերեն արձանագրությունների միջոցով:

Պատմագիրն այդ սահմանաքարերի և՛ արտաքին նկարագրությունը, և՛ նրանց վրայի արձանագրությունների բովանդակությունը տվել է շատ ստույգ կերպով: Վերջին տասնամյակներում հայտնաբերված մի քանի այդպիսի սահմանաքարերը հաստատում են Խորենացու հաղորդածների ճշտությունը²:

¹ Յե՛ս Մ. Խորենացի, Պատմութիւն, էջ 54, Տփղիս, 1913:

² Մանգ, էջ 186.

Մեծ պատմագրի սրատես աչքից չի վրիպել նաև Դառնի բերդի պարսպի վրա եղած հունարեն արձանագրությունը, որի բովանդակության վերծանումով նա յուրովի իմաստավորել է արդատաշեն այդ հոյակապ հուշարձանի պատմությունն ու նկարագրությունը¹:

Նրկրորդ պատմագիրը, որն առատորեն օգտագործել է արդեն հայկական արձանագրությունները, խորհնացուց ույ՝ դար հետո ասպարեզ իջած Ստեփաննոս Ռրելյանն է: Սյունյաց նահանգի պատմությանը նվիրած իր հայտնի աշխատության մեջ, հասկապես ներքին կյանքին և վանքերի ու եկեղեցիների շինարարության գործին վերաբերող ողջ պատմությունն Ռրելյանը բաղել է Տարեի վանքի «մատենագրանում» պահվող վավերագրերից և եկեղեցիների պատերին փորագրված արձանագրություններից:

Ռրելյանը ոչ միայն օգտագործել է արձանագրությունների բովանդակությունը, այլև նրանցից շատերը արտագրել և ղուգել է իր աշխատության մեջ: Պատմագրի գիտական այդ բարեխիղճ մոտեցման շնորհիվ կորստից փրկվել են բազմաթիվ արձանագրություններ: Հատկապես պետք է նշել և այն, որ Ռրելյանի պատմության մեջ գնտնդված այն արձանագրությունների համեմատությունը, որոնք մինչև այժմ էլ մնացել են անհետնում, ցույց է տալիս, որ Ռրելյանն ավելի ճիշտ է արտագրել, քան XIX դարի նամիտրդներից ոմանք: Պատմագիրը օգտագործած բազմազան աղբյուրները հիշատակում է իր աշխատության սկզբում. դրանք են՝ բոլոր հայ պատմիչները, Տարեի վանքի արխիվում պահվող բազմաթիվների, սյունյաց իշխանների և կարողիկոսների նամակներն ու հրովարտակները «և յարձանագրութեանց եկեղեցեանց և յիշատակարանաց գրոց»²:

Նրբորդ հայ պատմիչը, սրբ նույնպես մեծ թվով արձանագրություններ է արտագրել իր աշխատության մեջ, դա XVII դարի պատմագիր Ջաքարիա Սարկավազն է: Ջաքարիան Հովհաննավանքի արձանագրությունների հիման վրա կազմել է այդ վանքի «կոնդակը»: Ջաքարիայի ժողոված արձանագրությունները հրատարակված են նրա Պատմության վերջում, որպես նրբորդ հատոր, հետագայում տեղագիր հեղինակները՝ Շահխաթունյանցն ու Ալիշանը հենց Ջաքարիայի գրքից էլ արտագրել են Հովհաննավանքի արձանագրությունները: Ջաքարիա Սարկավազի այդ շնորհակալ գործի արժեքը ցույց ապու համար անհրաժեշտ ենք համարում մեջ բերել մեծ հայագետ Մ. Աբեղյանի այդ առթիվ գրած խոսքերը.

«Ջաքարիա Սարկավազը բացի մատենագիրներից ու գրքերի հիշատակարաններից՝ օգտվում է նաև արձանագրություններից. նա ընդօրինակում է պատերի վրա եղած արձանագրությունները և մանրամասն հշտություն մտցնում յուր կոնդակի մեջ, որով Ջաքարիան հանդիսանում է մեր հնագրական արձանագրական բանկագին հիշատակարանները ժողովողների նախահայրը: Մի բան, որ շատ կարևոր է»³:

Այս կամ այն չափով հայկական արձանագրություններ հնում հավաքվել են նաև շատ յուրահատուկ ձևով: Հայաստանի մի շարք վանքեր ժամանակի ընթացքում գնումների, նվիրատվությունների և թագավորներից ու իշխաններից ստացած արտոնությունների շնորհիվ տնտեսապես չափազանց ուռնացել էին. իրենց այդ գիրքը հաստատուն և ժառանգական դարձնելու և հետագա ունեցություններից ու վեճերից ապահովելու համար վանքերը կազմում էին հատուկ մատյան-Վոթուկներ, որոնց մեջ աստիճանաբար արտագրվում և պահվում էին վանքի հետ կապված նման բոլոր գործարքներին վերաբերող փաստաթղթերի պատեմները. քանի որ յուրաքանչյուր վանքի պատերի վրա գրված արձանագրությունների մեծ մասն էլ հիշված գործարքներին վերաբերող փաստագրեր են, ապա դրանց մեծ մասը արտագրվել են այդ Վոթուկների մեջ: Արժեքավոր այս ձեռնարկության շնորհիվ շատ արձանագրություններ, որոնք կարող էին ոչնչանալ հետագա նորոգումների ժամանակ կամ հնանալով՝ բոլորովին եղծվել, փրկվել են: Նման մատյան-Վոթուկներ են ունեցել Սանահին,

¹ Անգ, էջ 242:

² Ստ. Օրբելյան, Պատմութիւն Կոնստանդին Սիսական, էջ 10, Թիֆլիս, 1911:

³ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. II, Երևան, 1940, էջ 455:

Չենք հիշատակում այլ պատմագիրների, որոնք ավելի քիչ չափով են օգտագործել արձանագրությունները, ինչպես, օրինակ, Կ. Գանձակեցին:

Սաղմոսավանքի, Լիմի և Կսուց անապատի վանքերը: Շատերը դրանցից չեն պահպանվել. մնացել են Սանահինի Փռչուկի երկու օրինակները, որոնք պահպանվում են մեր Մատենադարանում և որոնցից օգտվել է Կ. Ղաֆազարյանը Սանահինի վանքի արձանագրությունների իր հրատարակության մեջ¹: Իսկ Աղվանից Յաչի կաթողիկոս Հասան Զալալյանի կազմածը, 1718 թ. լրիվ ընդօրինակել է Շահխաթունյանցը²:

Հայկական արձանագրությունների սխառմատիկ հավաքման և հրատարակման գործն սկիզբ է առել XIX դարի առաջին կեսից: XIX դարի գիտական մտքի ընդհանուր վերելքը նվթարապես և դրա հետ կապված ընդհանուր հետաքրքրությունը դեպի հին արձանագրությունները՝ անարձագանք չեն մնում նաև Հայաստանում: Ձևայած դարակցի տասնամյակների ավերիչ պատերազմներին և մասսայական տեղափոխություններին, հայ իրականության մեջ գտնվում են առանձին անհատներ, որոնք ուշագրություն են դարձնում այդ կարևոր գործի վրա: Այդպիսիներից էր առաջին հերթին Ներսես Աշտարակեցին: Քաղաքական և եկեղեցական այդ եռանդուն գործիչը, իր բազմապիսի գործունեությանը զուգընթաց, զբաղվել է նաև արձանագրությունները հավաքելու և կորստից փրկելու գործով: Մատենադարանում գտնվող նրա արխիվում պահպանվել է մի նամակ՝ գրված 1825 թ. օգոստոսի 31-ին, ուղղված Հարություն վարդապետին, որով կարգադրում է հավաքել վանքերի, եկեղեցիների և գերեզմանաքարերի վրա գտնվող բոլոր արձանագրությունները: Այդ կարևոր փաստաթղթի մեջ տրված են արձանագրությունների նշանակության և հավաքման մասին այնպիսի հրահանգներ, որոնք, հիմնականում, այժմ էլ չեն կորցրել իրենց արժեքը:

Նկատի ունենալով, որ այդ հրահանգ-նամակով փաստորեն հիմք է դրվել մի նոր և կարեւոր գործի և այն, որ չհրատարակված այդ փաստաթուղթը պարզում է Աշտարակեցու գործունեության մի կարևոր բնագավառ ևս, մեջ ենք բերում այդ նամակն ամբողջովին.

Արձանագատի Ցարութիւն վարդապետ.

Որպէս աստէն քեզ ի դէպ համարեցաք ասել, այնպէս ահա գրեմ քեզ զի թէ չգոյէ արգելք իմն ի կասկածանաց վնասուց իրիք, ոչ անագան զաշխատանս ի գործ եղեալ ջան ունիցիք հաւաքել զամենայն զյիշատակագրութիւնս գտանեցեալ ի վերա բարաւորաց դրանց եկեղեցեաց կամ ի վերայ որմոց նոցին ի ներքուստ և արտաքուստ և կամ ի վերա գերեզմանաքարա(ն)ց հնագունից հոգեւորականաց և մարմնականաց, և զգուշաւոր ուղղագրութեամբ բերել առ մեզ վասն տպել տալոյ յաղագս յաւիտեանական ապահովութեանց յիւրաքանչիւրոց նոցին, զի մի հնութիւն ծամանակաց հնարեսցի կորուսանել զայնս և ի ձեռն փառութեանց կամ հակառակորդաց ոմանց:

Այլ պատուիրեմ յատկապէս զի որքան կարօղ լինիցիք մի ծուլասցիք վասն դժուարութեան լեռանց և ձորոց յորս գտանիցին եկեղեցիք, զանցառու լինիլ անհոգաբար, քանզի պարտէ զմտաւ ածել նախ գերախտի շինողացն զայնս, և զսէր նոցին ըստ հաւատոյ, և այնպէս ապա վասն հաւատոյ լինիլ հետամուտ առ անջնջելի առնել զայնս, որով գտանիք հաղորդակից նոցին բարեպաշտութեանց և ես ևս եղեց ձեզ շնորհակալ:

Նւ զայս ոչ անդէպ համարիմ յայտնել ձեզ, զի ուր ուրեք գտանիցին գրուածք գորս ոչ կարողասցիք դուք կարգալ, նշանակեսցիք զտեղի այնպիսեացն թէ ի վերա որ եկեղեցւոյ ի վերա որ կողման որմոյ նորին գտանի գրուածն դժուարընթերց:

Համար 196

1825 օգոստոսի 31³:

Հարություն վարդապետ Տեր-Բարսեղյանց Շնորհքին (հետագայում եպիսկոպոս և արքեպիսկոպոս) Սանահինի վանքի առաջնորդն էր, նա 1831 թ. շինել է նաև այդ վանքի աղ-

¹ Կ. Ղաֆազարյան, *Սանահինի վանքը և նրա արձանագրությունները*, Երևան, 1957, էջ 65:

² Շահխաթունյանց Հովհաննէս եպիսկոպոս, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացի նորին, հատ. Բ, Էջմիածին, 1842, էջ 306—382*:

³ *Մատենադարան, Ներսէս Աշտարակեցու արխիվ, Թղթ. 166, վավ. 378*: Այս վավերագիրը մեզ մասնադուրջ արեց Հ. Փափաղյանը, որին և հայտնում ենք խորին շնորհակալութուն—Ս. Բ.:

բոլորը և այդ ստորիվ նյութ հակառակ գրել իր հիշատակագրությունը¹: Հարություն վարդապետի հավաքած արձանագրությունները չեն պահպանվել, բայց կողմնակի փաստերից երևում է, որ նա իրոք հավաքել և կազմել է մի ժողովածու, որից հետագայում սգովել են ուրիշները. այդ ստորիվ հաջրերունին (Դ. Հովհաննիսյան) գրել է.

«Հաղրատում և Սանահնում մեզ ասացին ժամանակակից գիտակ սնճինք, բն հանգուցեայ Ջալալյանցն ինքն անձամբ չէ ժողովել վանքերի արձանագրություններն, այլ ուղղակի օրինակել և Շնողեցի Հարություն ևպիսկոպոս Տեր-Բարսեղյանցի ձեռագրից»²:

Պետր և հավատալ, որ Ներսես Աշտարակեցին նման բանավոր և գրավոր հրահանգներ Հարություն վարդապետից բացի պետք է տված լինելու նաև ուրիշներին: Մի բան պարզ է, որ Ներսես Աշտարակեցին գնդապետ արքայապետությանից առաջ կարող էր սահմանափակ անձանց նման հանձնարարություններ տալ, ապա կարող լիկոս դառնալուց հետո շատ ավելի մեծ հնարավորություններ ուներ իր այդ մտահղացման իրագործման համար:

Պարզ է նաև, որ XIX դարի երրորդ տասնամյակում հայկական արձանագրությունների հսկայական-հրատարակման գործի անհրաժեշտությունն արդեն գիտակցված էր և այդ գործի մեջ մեծ դեր էր կատարում ժամանակի ամենահեղինակավոր անձնավորությունը՝ Ներսես Աշտարակեցին: Այդ թվականներից էլ սկսեցին մեկը մյուսի հետևից լույս տեսնել ճամփորդական-տեղագրական մեծածավալ աշխատություններ, որոնց մեջ մեծ տեղ են գրավում հուշարձանների նկարագրություններն ու նրանց պատերի վրա եղած արձանագրությունների արագրությունները:

Ռուսների հաղթական առաջխաղացումը դեպի Հայաստան և դրա հետ կապված հայ ժողովրդի ազատագրական դարավոր հույսերի անհախճաբ վերելքը խթան են հանդիսանում, ի թիվս այլ ձևերակումների, նաև առանձնահատուկ հետաքրքրության գեպի հայրենի երկիրն ու նրա հնությունները: Մենուդ է առնում պատմա-բանասիրական գրականության մի նոր ճյուղ, ճամփորդական-տեղագրական գրականությունը, որի բովանդակության առանցքը կազմում է հայրենի լուսության, աշխարհագրության, շեն ու ավեր գյուղերի և քաղաքների, վանքերի և եկեղեցիների, լեռների ու կարավանատների, ժողովրդի գրադուռների նկարագրությունը. նաև շեն ու ավեր հուշարձանների շրջակայքում և պատերի վրա եղած արձանագրությունների հավաքումը:

Մինչև XIX դարի կեսերը, քսան տարվա ընթացքում, իրար հետևից լույս են տեսնում բանասիրության մեջ հանրահայտ Բժիշկյանի (1830), Շահխաթունյանցի (1842), Ջալալյանցի (1842—1858) աշխատությունները, հինգ ծավալուն հատորներ, որոնց մեջ ամփոփված են մի քանի հարյուր արձանագրություններ: Պատմագրական գրականության այդ նոր ճյուղն իր նոր շնչով և, մանավանդ, պատմական ու կուլտուրական խնդիրները նոր և թարմ նյութերով ներշնչված պարզաբանելու համար մեծ հետաքրքրություն են առաջացնում թե՛ հասարակության և թե՛ մանավանդ գիտնականների շրջաններում: Արդյունքը լինում է այն, որ բազմաթիվ մարդիկ լծվում են նման աշխատանքների, հրատարակվում են բազմաթիվ նորանոր աշխատանքներ՝ ընդգրկելով աշխարհագրական մեծ և փոքր տարածություններ, նաև մամուլի մեջ (ամսագիր և օրագիր) բազմաթիվ տեղեկություններ ու հոգվածներ են տպագրում՝ առանձին գյուղերի ու հուշարձանների նկարագրություններով և արձանագրությունների վերծանմամբ:

Ճամփորդական-տեղագրական գրականությունը ամուր արմատներ լուսնեց հայ պատմագիտական գրականության մեջ, դարձավ աշխատանքի կայուն և ինքնատիպ բնագավառ և հասավ մինչև մեր օրերը: Այդ աշխատանքով զբաղվեցին ոչ միայն քաղաքներում ապրող մտավորականները, այլև գյուղերում աշխատող ժողովրդական մտավորականության լավագույն ներկայացուցիչները:

XIX դարի երկրորդ կեսին լույս տեսան էլ ավելի շատ տեղագրական աշխատություններ, որոնց մեջ, նախորդների նման, արձանագրությունները բռնում են իրենց պատկառելի

¹ Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 162:

² «Արձագանք», 43, 1884, էջ 628.

տեղը: Դրանցից ամենանշանակալիցներն են Ներսես վ. Սարգիսյանի, Արև վ. Մխիթարյանի, Դարեգին վ. Սրվանդադյանցի, Քաջբերունու (րժ. Գարիբեյ Հովհաննիսյան), Մտկար Բարխուդարյանցի, Մեսրոպ արք. Սմբատյանցի և այլ բազմաթիվ հեղինակների հանրահայտ աշխատությունները: Վերջապես մեծատաղանդ Ղևոնդ Ալիշանի չորսհատորյա տեղագրական կոլեկցիան աշխատությունները, որոնց մեջ խնամքով ամփոփված են նկարագրվող վայրերից մինչև այդ հրատարակված բոլոր արձանագրությունները. տեղին ենք համարում մեջ բերել մեծ հայագետի մոտեցումը հանդիպ արձանագրությունները դեռևս իր տեղագրական առաջին աշխատության՝ Շիրակի մեջ: «*Որչափ ինչ գառնեմ արձանագրութիւնս՝ գամենայն կամիմ մոծանել ի տեղագրութիւնս, որոյ և պատուականագոյն մասն համարիմ*»¹:

Հայկական արձանագրությունների պատմա-բանասիրական արժեքն ըստ արժանվույն գնահատեցին նաև օտար գիտնականները, որոնցից մի քանիսը նույնիսկ մասնակից եղան նրանց հավաքման և հրատարակման գործին. դրանցից հիշատակելի են Բրուսսեն, Լանգլուան, Դյուրուան: Մի խումբ հայազգի գիտնականներ էլ ռուս բանասիրությանը ներկայացրին հայկական արձանագրությունների մի զգալի քանակություն. վերջիններիցս հատկապես արժանի են հիշատակության Ալեքսանդր Երիցյանը, Մկրտիչ Լմինը, Խաչատուր Հովհաննիսյանը և ուրիշներ²:

Քսենոփոր դարի առաջին տասնամյակներում էլ արձանագրությունների հավաքման ու հրատարակման աշխատանքներն ընթանում են նույն մեթոդներով, կրկին որպես կցորդ հիմնականում տեղագրական աշխատությունների. բայց մի առավելությամբ. դա այն է, որ երբեմն հրատարակվող արձանագրություններին կցվում են նաև նրանց լուսանկարները: Այս շրջանի ամենարևմտավոր, թեև ոչ բավարար որակով արձանագրություններ հավաքող և հրատարակողը եղել է ազգագրագետ Ե. Լալայանը, որն ազգագրական նյութեր հավաքելու նպատակով շրջագայել է Հայաստանի բազմաթիվ գավառներ և իր հավաքչական ծրագրի մեջ ունենալով նաև տեղագրական բաժին, հավաքել ու հրատարակել և՛ բազմաթիվ արձանագրություններ, դարձյալ կցված հուշարձանների նկարագրությամբ: Այդ բնագրերին Լալայանը հաճախ կցել է նաև նրանց լուսանկարները, որոնք և նրա աշխատության ամենագրական մասն են կազմում: Ե. Լալայանի աշխատությունները հրատարակված են «Ազգագրական հանդեսի» հատորներում (26 հատոր), որոնց մի մասը լույս է տեսել նաև առանձին պրակներով:

Արձանագրությունների լուսանկարներ հրատարակելու գործում իր արժեքավոր տեղն ունի նաև սակավ ծանոթ լուսանկարիչ Մ. Փափազյանը, որ հրատարակել է հինգ լուսատիպ ալբոմներ Հայաստանի հուշարձանների, որոնց մեջ կան նաև նրանց վրայի արձանագրություններից օրինակներ³:

Նույնպես քչերին է ծանոթ մնացել Հ. Քյուրքչյանի լուսանկար ալբոմը «Հայաստան, ավերակք Անույ» (Երևան, 1878): Ինչպես Փափազյանի, այնպես էլ Քյուրքչյանի աշխատությունները ունեցել են փոքր սպաքանակ, սպառվել են շուտով և, մանավանդ, որպես ցուցադրական նյութ շատ են գործածվել ու շուտ փչացել. հատկապես Փափազյանինը՝ ձեռքի աշխատանք և մեծադիր լինելու պատճառով ունեցել է փոքր սպաքանակ և թանկ գին:

Սակայն կատարված այդ աշխատանքները նույնիսկ քանակի տեսակետից դեռևս շատ հեռու են սպառիչ լինելուց: Մոտավոր հաշիվներով 9—10 հազարի հասնող հայերեն արձանագրություններից, որոնք սփռված են ամբողջ հայկական բարձրավանդակում և հարևան երկրներում, երբեմն էլ հասնում են հեռավոր վայրեր՝ Վուգայի կամ Նեղոսի ափերը, հազիվ 1500—2000-ն է եղել հրատարակված: Կ. Կոստանյանցի հայտնի *Վիմական տարեգիր* ժողովածուն, որը հրատարակված է 1913 թ. և մինչև այդ հրատարակվածների մոտավորապես լրիվ հավաքածուն է, պարունակում է ընդամենը 1328 արձանագրություն:

¹ Ալիշան, *Շիրակ, Յասաջարանից հետո Մանթլիթիւնք բաժին (էջ չունի)*:

² *Հիմնական աշխատությունների ժամանակագրական ցանկը տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ XXVIII—XXXI*:

³ Մատթեոս Փափազյան, *Հնութիւնք վանորէից հայոց—Ղաղախ, Դեղաբքունիք, Վայոց ձոր, Գողթան գավառ, Սյունեաց աշխարհ, 1889—1892*:

Որակի տեսակետից հրատարակված արձանագրություններն ունեն շատ մեծ յերուր-
յություններ: Երև XIX դարի առաջին կեսում նրանք մոտ էին կանգնած ընդհանուր արձա-
նագրագիտության սկզբունքներին և հավաքչական մեթոդներին. ապա նույն դարի երկրորդ
կեսին, երբ Եվրոպայում մշակվեցին այլ, ավելի կատարյալ վերածանության և հրատարակ-
ման եղանակներ, մեզ մոտ կատարված աշխատանքներն արդեն չէին լավարարում գիտական
նոր պահանջներին:

Ներսիս Առաքարյանցու կողմից Հայրություն վարդապետ Տեր-Բարսեղյանին (հավանաբար
և ուրիշներին) տրված հրահանգները, որոնք իր ժամանակի պատմա-լրագրական հասկա-
ցողությունների արգիստիքն են, շարունակվեցին ուժի մեջ մնալ մինչև դարի վերջը: Մի
կողմից առաջին հրատարակիչների օրինակին ենթարկվելու մտայնությունը, մյուս կողմից
այդ գործով զբաղվող հայ մտավորականների կտրված լինելը համաշխարհային գիտական
մարից՝ արգելքներ հանդիսացան նոր սկզբունքների կիրառմանն այդ ասպարեզում:

Ուսկյալ այդ հետամնացության ամենահիմնական պատճառը հայ իրականության ընդ-
հանուր կուլտուրական ցածր մակարդակն էր, որի պայմաններում հնարավոր չէր լինի
արձանագրությունների, նույնպես ազգագրության, լրագրությունության և այլ կարգի նյութերի
հավաքման համար կայուն և կենսարոնացված կազմակերպություններ ստեղծել, որը կարող
էր ապահովել նման աշխատանքների գիտական մոլորակը, նրանց համար տեխնիկական
սարքավորումներ հայթայթել և հատուկ մասնագետներ պատրաստել:

Արձանագրությունների հավաքման աշխատանքներն, ինչպես հայտնի է, կապված են
երկարատև և ծանր ճամփորդությունների ու նյութական զգալի միջոցների հետ, մանավանդ
որ արձանագրությունները ստիպված են ամբողջ երկրում մեկ, իսկ՝ բնակելի և թե՛ անբնակ
վայրերում, զովար մատչելի լեռնային վայրերի և ձորերի մեջ. այդպիսի տեղերն այցելելու
համար պահանջվում են երկարատև ժամանակ և տեխնիկական զանազան միջոցներ: Արձա-
նագրությունների զգալի մասը հողմահարված-եղծված են, շատերը ջարդված և բեկորների
վերածված: Յուրաքանչյուր հուշարձանի մոտ պահանջվում է մի քանի օրվա համառ աշ-
խատանք, լանդորներ՝ որպեսզի թափված քարերը տեղից շարժեն, հարմարություններ՝ պա-
տերի բարձր տեղերում գրվածքներին մոտենալու համար. ապա վերածնող մասնագետից
բացի, շնորհալի լուսանկարիչներ և գծագրող ընդօրինակողներ, այլ խոսքով, մի քանի հոգուց
բաղկացած գիտական արշավախումբ: Այսպիսի գործը կազմակերպել կարող է, հարկավ,
ամուր նյութական և գիտական հիմքերի վրա դրված հատուկ կազմակերպությունը միայն,
որը հայ իրականության մեջ բացակայում էր:

Զնայած լուրջ այս պայմանների բացակայությանը՝ կատարվել է մեծ և շնորհակալ
աշխատանք. մոտ 2000 հայերեն արձանագրություններ հավաքվել և հրատարակվել են: Այդ
գործը կատարել են առանձին նվիրված անհատներ, ստիպական նախաձեռնությամբ և զբը-
կանքների գնով, իայց ոչ պաշտան գիտական մեթոդներով: Արձանագրություններ հավաքող-
ների մեծ մասը եղել են մարդիկ, որոնք ոչ այդ գործի համար և ոչ էլ ընդհանրապես
գիտական պատրաստություն են ունեցել. նրանց մի զգալի մասը եղել են հոգևորականներ.
որոնց կերական աշխարհայացքը նույնպես բացասական դեր է խաղացել իսկ նյութերի մեջ
ընտրություն կատարելու և թե՛ նրանց լուսնգրականությունը ճիշտ ըմբռնելու տեսակետից:
Նշենք նաև, որ եղել են դեպքեր, երբ հեղինակավոր հոգևորականներ, օգտվելով իրենց պաշ-
տոնական դիրքից, արձանագրությունները հավաքելու կարևոր գործը հանձնարարել են
նվազ պատրաստություն ունեցող անձանց և իրենք նույնիսկ չեն էլ ստուգել նրանց ժը-
տությունը: Նախորդ էջերում տեսանք, որ Սանահինի և Հաղթալի վանքերի արձանագրու-
թյունները Ջալալյանը հրատարակել է, օգտվելով Հովհաննես Տեր-Բարսեղյանի հավաքա-
ծուից: Ջալալյանի գրքի երկրորդ հատորում ամփոփված են գլխավորապես Վայոց ձորի
արձանագրությունները, որտեղ հեղինակը երբեք չի եղել, այլ նրա խնդրանքով աշխատողը
կատարել են Հովհաննես Բաբայանը և ուրիշներ:

¹ Տե՛ս «Փորձ», 1878, էջ 321, որտեղ Գաջրեռնին մատնանշում է նաև Անի քաղաքի, Շամախու ջըր-
ջանի և այլն արձանագրությունները Ջալալյանի համար ուրիշների հավաքած լինելը և այդ առթիվ մամու-
լում տեղի ունեցած բանավեճը:

XXIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ բանասիրության մեջ արձանագրություններ հրատարակող կամ իրենց ուսումնասիրությունների ընթացքում օգտագործող գիտնականներն արդեն նշում են հրատարակությունների անբավարար վիճակը: *Վիմալան տարեգրի* կազմողը հետևյալ կերպ է բնորոշում հրատարակությունների որակը և նրանց թերությունների պատճառները.

«Ձեռն առ մեզ ճշգրիտ նմանահանութիւնք և ոչ կարգաւորեալ համախմբեալ ժողովածոյք յիշատակարանացդ ըստ աւրինակի, որպէս գտանեմք զայնպիսին ի լեզուս եւրոպացի ազգաց¹:

և ապա՝

«Ի բաղդատութենէ անտի արձանագրութեանց ոմանց, որք ոչ ի միոշէ ձևաւնէ են ընդաւրինակեալք, բացահայտ լինի, եթէ կարի բազմազան են տարբերութիւնք ընթերցուածոցն, անշուշտ, յառաջացեալք ի տարբերութենէ անտի վերձանաւդացն, յորոց ոմանք թերուսք և անվարժք, այլք իբր աւտարազգիք, անտեղեակը նրին հանգամանաց ոնոյ գրութեանն, և այլն ըստ կարգին»²:

Արձանագրությունները հավաքող և հրատարակողների հիմնական թերությունները հետևյալներն են.

1. Նրանք հատկապես պատրաստված մասնագետներ չեն և ոչ էլ միշտ անհրաժեշտ ընդհանուր գիտելիքների տեր. այդ պատճառով էլ ունեցել են տարբեր մոտեցում և տարբեր հաջողությամբ ու թերություններով են կատարել իրենց աշխատանքը:

2. Նրանցից յուրաքանչյուրն, ըստ իր զարգացման մակարդակի և աշխարհայացքի, սեփական չափանիշով է որոշել արձանագրությունը, համարել կարևոր կամ անկարևոր և, սովորաբար, արտագրել է միայն կարևոր համարածը:

3. Արտագրողները չեն պահպանել արձանագրությունների հնագրական, ուղղագրական և քերականական առանձնահատկությունները. իրենց հասկացողությամբ «ուղղել» ու գրաբարի են վերածել ժողովրդական-բարբառային բառերն ու արտահայտությունները, որով միանգամայն արժեքազրկել են այդ բացառիկ կարևոր սկզբնաղբյուրները հայոց լեզվի պատմության և բարբառագիտության համար:

4. Հավաքել-արագրել են գերազանցապես ընդարձակ, հեշտ վերձանելի, ամբողջական և իրենց բովանդակությամբ նշանավոր անձների ու գիտնականների հետ կապված արձանագրությունները:

5. Նրանց ընթերցումների մեջ կան թվականների, անձնանունների, տեղանունների և նոր ու հազվագյուտ բառերի շատ աղմատումներ, ինչպես և բովանդակության անկապություններ՝ մաշված տեղերը բաց թողնելու հետևանքով:

6. Ձեռն օգտագործել տեխնիկական օժանդակ հարմարություններ. չեն լուսանկարել, գծագրել կամ պատճենահանել (էստամպած), որով արձանագրությունների ստույգությունը մնում է կասկածելի. այդ պատճառով էլ հաճախ նույն արձանագրությունը երկու տարբեր հրատարակիչների մոտ խիստ տարբերվում է իրարից:

★ * ★

Հայերեն արձանագրությունների ժամանակակից գիտական մեթոդներով հավաքելու և հրատարակելու պատմությունը սերտորեն կապված է Աճի քաղաքի ավերակների պեղման աշխատանքների հետ:

1892 թ. Ն. Մառը սկսեց պեղել Բագրստունյաց մայրաքաղաքի ավերակները: Ինչպես պարզվում է արխիվային նյութերից՝ Ն. Մառը ծրագրել էր պեղման իր աշխատանքները վերածել Հայաստանի նյութական և հոգևոր կուլտուրայի ուսումնասիրության մի խոշոր ձեռնարկի, որի մեջ հայերեն արձանագրությունների ուսումնասիրությունը պետք է կազմեր մի կարևոր բնագավառ: Իր եռանդուն ու համակրելի բնավորության և բազմակողմանի

¹ Կ. Կոստանեանց, *Վիմալան տարեգրի*, Նախաբան, էջ XXI:

² Անգ.

պատրաստության շնորհիվ Ն. Մառը կարողացավ իր շուրջը հավաքել լազմարիվ կրիտա-սարդ գիտնականների և գրեթե 25 տարի տևող պեղումների աշխատանքներին զուգընթաց ուսումնասիրական լազմակողմանի աշխատանք կատարել Հայաստանում:

Հենց առաջին իսկ տարին, պեղումներից հետո, Ն. Մառը շրջագայում է նաև Անիի մերձա-կայքի հուշարձանները և գրավում հայերեն արձանագրություններով, որոնցից մի քանիսն անմիջապես հրատարակում է: Մինչև իր կյանքի վերջն էլ Մառը չդադարեց անդրադառնալու հայերեն արձանագրությունների ուսումնասիրության գործին: Նա իր աշակերտ-աշխատու-կիցների մեջ աշխատանքի բաժանում էր կատարում ըստ վերջիններիս գիտական հետաքրք-րության և ունակությունների, դրա հետևանքով էլ հայերեն արձանագրությունների հա-վաքման և դրանց կորպուսի ձևով հրատարակման գործը հանձնարարվեց Հովսեփ Օրբելուն:

2. Օրբելին մասնակցեց Անիի պեղման աշխատանքներին 1906 թվականից, դեռևս լինելով ուսանող. հենց առաջին իսկ տարվանից նա ձևակերպեց հայերեն արձանագրություն-ների իր ուսումնասիրությունները Ն. Մառի ղեկավարությամբ և, այնուհետև, իր գիտական լազմակողմանի գործունեության ընթացքում այդ աշխատանքը մնաց նրա ամենասիրելի բնագավառը, իսկ արձանագրությունների կորպուսի հրատարակությունը՝ նրա լազմանքը:

Հայերեն արձանագրագիտության բնագավառում Անիի դպրոցի և հատկապես Հ. Օրբելու վաստակը ոչ միայն նրա հավաքած և հրատարակած արձանագրություններն են, այլև զերա-զանցապես այն, որ նա մշակեց և հիմք դրեց գիտական նոր մոտեցման դեպի այդ սկզբնաղբյուր-ները և ապա մշակեց նրանց հավաքման ու հրատարակման համար ժամանակակից գիտության լարձր պահանջների ոգով սկզբունքներ և մեթոդներ, որոնք ուղեցույցներ դարձան հետագա ուսումնասիրողների համար: Այդ սկզբունքի և մեթոդի առանձնահատկությունները հե-տևյալներն են.

1. Յուրաքանչյուր արձանագրություն ինքնըստինքյան մի ամբողջական պատմա-կուլ-տուրական փաստաթուղթ է. հետևաբար նույն ճշգրտությամբ պետք է հրատարակվի, ինչ-պես որևէ այլ ձեռագիր բնագիր:

2. Յուրաքանչյուր արձանագրություն, անկախ նրա մեծ կամ փոքր, ամբողջական կամ բերի լինելուց, պետք է հավաքել ու հրատարակել. թերի, նույնիսկ մեկ բառ և կամ մի քա-նի սառ կազմող բնկորները նույն արժեքն ունեն, ինչ ձեռագրական պատճառները:

3. Հավաքելու և հրատարակելու ընթացքում խտրություն չպետք է դնել արձանագրու-թյունների մեջ՝ ըստ նրանց բովանդակության, որովհետև մեկի համար այն ոչ կարևոր է թվում, մեկ ուրիշ մասնագետի համար կարող է արժեքավոր լինել:

4. Ի տարբերություն հին ձեռագրերի, որոնք սովորաբար մի քանի օրինակով են մեզ հասել և պահպանվում են վստահելի վայրերում (մատենադարան, գրադարան, թանգարան և այլն) ու գիտական հրատարակության ժամանակ հնարավոր է կատարել համեմատություն-ներ ու նշել տարբերությունները՝ յուրաքանչյուր արձանագրություն միայն մեկ օրինակով է գրված, այն-էլ լացօթյա և ենթակա բնական ու չարամիտ ոչնչացման, այդ պատճառով էլ պիտի ուշադրեն պահպանել նրա գրչական, ուղղագրական և բոլոր այլ կարգի առանձնահատ-կությունները հրատարակության ընթացքում, վերծանողի հավելումներն ու շտկումները առնելով պայմանական նշանների մեջ: Վերծանումներին որպես փաստագիր պետք է կցել արձանագրության լուսանկարը:

5. Զարգված, եղծված կամ մասամբ կորած մասերը պետք է տրվեն առկա վիճակով, ամեն տեսակի լրացումները և կրահումները՝ պայմանական նշանների մեջ:

6. Յուրաքանչյուր արձանագրության համար նշել նրա գտնված վայրի ստույգ նկա-րագրությունը՝ գյուղ, քաղաք, հուշարձանի անունը և տեսակը. ապա հուշարձանի ո՞ր մա-սում է գտնվում. արտաքին, ներքին, ո՞ր պատի վրա, նրա ո՞ր մասում և ո՞ր արձանագրու-թյան մոտ:

7. Յուրաքանչյուր արձանագրության համար նշել լրիվ մատենագիտություն (հեղինակ, աշխատություն, էջ):

8. Տեղում հավաքչական աշխատանքները վարել այնպես, որ լավարարեն այս պահանջ-ներին՝ հրատարակության ժամանակ:

Հայաստանի գիտնականներից այդ նոր ուղղությամբ հատկապես մեծ աշխատանքներ է կատարել Գարեգին կաթ. Հովսեփյանը, որը շրջագայել է Հայաստանի շատ վայրեր ու անձամբ վերծանել, ստուգել և լուսանկարել է արձանագրությունները: Մասնակի հրատարակություններից բացի՝ հատկապես ճշիլի են նրա իրկու հիմնական աշխատությունները *Քարտեզ հալ հնագրություն*¹ և *Սաղաթյանը կամ Պոռշյանը հայոց պատմության մեջ* եռահատոր աշխատությունը²: Դրանց մեջ ամփոփված են հարյուրավոր նորահայտ կամ ի նորո ստուգված, լուսանկարված և բանասիրական մանրակրկիտ քննության ենթարկված արձանագրություններ:

Այս նոր մեթոդով հայերեն արձանագրություններ հավաքելու բնագավառում զգալի աշխատանք են կատարել նաև Մառի աշակերտներ Սմբատ Տ. Ավետիսյանը և Աշխարհբեկ Քալանթարը, բայց դժբախտաբար այդ աշխատությունների մեծ մասը չի հրատարակվել, նրանց մահվանից հետո կորել է: Այս ուղղությամբ նշանակալից է նաև բազմավաստակ Լևոն Մելիքյան-Բեկի աշխատանքները, որը բացի արձանագրությունների մասնակի հրատարակություններից, կազմել է նաև մի մեծ ժողովածու՝ «Վիրահայոց վիճական տարեգիր» (անտիպ):

Սովետական շրջանում այդ ուղղությամբ առանձնապես արդյունավետ աշխատանքներ է կատարել Կարո Ղաֆադարյանը, որը բացի արձանագրությունների մասնակի հրատարակություններից, ձեռնարկել է նաև կուլտուրական ճանաչող կենտրոն հանդիսացած մեծ վանքերի պատմությանը, նարտարապետական կառուցվածքներին և արձանագրություններին նվիրված առանձին հատորների հրատարակությանը, որոնց մեջ տրված են բոլոր արձանագրությունների գծագրերն ու զգալի չափով լուսանկարները³:

* * *

Հայերեն արձանագրություններն, ինչպես ասվեց, հրատարակված են գերազանցապես տեղագրական բնույթի բազմաթիվ աշխատությունների մեջ՝ առանձին գրքերով և մամուլի մեջ՝ հոդվածի և հոդվածաշարքի ձևով: Ուսումնասիրողի համար դրանցից օգտվելը կապված է մեծ դժվարությունների հետ. նախ՝ այդ աշխատությունները վաղուց հրատարակված լինելով՝ դժվար են գտնվում և ապա՝ շատ հեղինակներ նույն վայրի նույն արձանագրությունը հրատարակել են զգալիորեն տարբեր վերծանումներով: Ուսումնասիրողը ձեռքի տակ չունենալով բոլոր հրատարակությունները, հաճախ օգտագործում է վատ վերծանված բնագիրը և սխալմունքի մեջ ընկնում:

Դեռևս անցյալ դարի երկրորդ կեսում պահանջ է զգացվում եվրոպացիների կողմից հրատարակված զուտ արձանագրական ժողովածուների օրինակով հրատարակել հայերեն արձանագրությունների դիվան—Corpus.

1879 թ. Ռուսաստանի հնագիտական համագումարի նախապատրաստական կոմիտեի նիստերից մեկում առաջարկ մացվեց համագումարի օրակարգի հարց դարձնել Կովկասի սահմաններում գտնվող, մինչև XII դարն ընդգրկող, հայերեն, վրացերեն, հունարեն, եբրայեցիներն ու սեպագիր արձանագրությունները ժողովածուների ձևով հավաքելու և հրատարակելու խնդիրը և, որպես գործնական քայլ, հրատարակել մի ժողովածու մինչև համագումարի բացումը⁴: Ն. Էմինը հայտնում է, որ այդ ժամանակաշրջանն ընդգրկող հայերեն շատ արձանագրություններ կան հրատարակված. այդ հողորդման հիման վրա կոմիտեն հանձնարարում է Ն. Էմինին կազմել հայերեն արձանագրությունների ժողովածու, որը և լույս տեսավ Մոսկվայում 1881 թ., առանձին գրքով⁵:

Ն. Էմինի կազմած այդ ժողովածուն շատ հեռու է հայերեն արձանագրությունների դիվան—Corpus կոչվելուց: Նրա մեջ, ինչպես և վերնագիրն է նշում, ընդգրկված են շատ

¹ *Շողակաթ», Վաղարշապատ, 1913, նաև առանձին գրքով:*

² *Մասն Ա, Վաղարշապատ, 1928, մասն Բ, Երևան, 1942, մասն Գ, Նյու-Յորք, 1942, 3:*

³ Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948:*

⁴ Пятый археологический съезд в Тифлисе—Протоколы подготовительной комиссии, III кн., 13 մարտի 1879 թ., էջ 39:

⁵ Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего.

փոքր աշխարհագրական միջավայր և ընտրովի ու փոքր քանակությամբ արձանագրություններ, այն էլ յաղվածաբար՝ նախորդ տեղագրական աշխատություններից, առանց տեղում անձամբ ստուգելու, առանց լուսանկարների կամ պատկերներից ներկայացնող գծագրերի՝ նախորդ հրատարակիչների սխալներով: Այս բոլորի հետևանքով էլ նա համարյա անկատ մնաց բանասերների կողմից:

Մասնակցագրական կայքով հայերեն արձանագրությունների ժողովածու կազմելու փորձը կատարել է բանասեր Կարապետ Բասմաջյանը:

Փարիզում հրատարակվող իր «Բաժնաւեր» հանդեսի մեջ տպագրվող «Մեր հնությունները» հոդվածաշարի մեջ, 1900 թ, նա գրում է, որ խրմյան Հայրիկի կողմից հրավիրվել է Կովկաս ժնախոսական ուսումնասիրություններ կատարելու համար», որոնց մի կարևոր բաժինը պետք է կազմի «Արձանագրությանց ստույգ և անբերի հրատարակությունը, որով հետո պետք է կազմվի իմ Հայթաճան անուն ուսումնասիրությունը»¹:

Կ. Բասմաջյանը, հենվելով տեղերում կատարած իր համեմատությունների վրա՝ նաև շատ իրավացի դիտողություններ է անում նախորդ հրատարակությունների թե՛ որակի և թե՛ քանակի վերաբերյալ: Սակայն Բասմաջյանին չհաջողվեց հրատարակել Հայթաճանը, իսկ նրա մասնակի հրատարակություններից ամենահինը՝ «Հայերեն արձանագրութիւնք Անույ, Բագնայրի և Մարմաշինու», որը լույս տեսավ միայն 1931 թ. Ֆրանսիական գիտական հանդեսում և ֆրանսերեն թարգմանությամբ, տառապում է գրեթե նույն թերություններով, ինչ որ իր քննադատած հիդիմանների հրատարակածները. միակ առավելությունը, որ ունի Կ. Բասմաջյանի աշխատությունը, դա սակավաթիվ արձանագրությունների լուսանկարների տպագրությունն է:

1910 թ. Լազարյան նեմարանի (Մոսկվա) մասնագիտական դասարանների խորհուրդը երկու մրցանակաբաշխություն հայտարարեց (Գ. Փանանյանի մրցանակ) հայագիտական աշխատությունների լավագույն գործերի համար 100 և 700 ռուբլի գումարով. դրանցից առաջինը՝

«Ժողովածու (բացատրական առաջաբանով) ցայժմ ծանոթ բոլոր հին-հայկական արձանագրությունների՝ մինչև Ժն դարը (Corpus inscriptionum Armenicarum), որոնք գտնվում են Ռուսաց Հայաստանի ուսմաններում և հանված են լուսանկարով կամ խնամքով ընդօրինակված իսկականից: Նույն նյութի մասնակի կատարումը՝ այն է Ռուսաց Հայաստանի որևէ նշանավոր կամ մի քանի գավառի արձանագրությունների լիակատար ժողովածուն կարող է պարզևատրվել նշանակված մրցանակի մի մասովը»²:

Թեև աշխատությունները ներկայացնելու համար ժամկետ էր սահմանված երեք սառի, բայց և այնպես նշված աշխատությունը չներկայացվեց:

1912 թ. մեր հանգուցյալ ուսուցիչ Հ. Անառյանը «Հանդես ամսօրեայ» ամսագրի մեջ հրատարակեց մի դիմում-հայտարարություն, որի մեջ հայտնում էր, թե ինքը ձեռնարկել է կազմելու հայերեն արձանագրությունների ժողովածու—*Հայարձան*. արդեն հավաքել է 1000-ի չափ արձանագրություններ, որոնց թիվը շուտով կհասցնի 1500-ի, դրանք հիմնականում վերաբերում են Ռուսահայաստանի շրջաններին, պակասում են միայն Թուրքահայաստանի և գաղթավայրերի արձանագրությունները, այդ պատճառով էլ կոչ է անում բոլոր շահագրգռված մարդկանց խնամքով արտագրել և իրեն ուղարկել իրենց մատչելի վայրերից արձանագրություններ. հայտարարությունը վերջանում է 5 կետից բաղկացած հրահանգով՝ թե ինչ մեթոդներով պիտի հավաքվեն, ապա կոչ է անում բոլոր թուրքահայ թերթերին՝ արտատպելու այդ հայտարարությունը³:

Այժմ էլ, հանգուցյալ պրոֆեսորի անտիպ աշխատությունների շարքում մնում է նաև *Հայարձանը*. այն կազմված է քաղվածաբար՝ տեղագրական գրքերից և մամուլի հոդվածներից՝ հիմնականում, և նրա մեջ առնված են մինչև հայոց (1551) թվականը կրող արձանա-

¹ «Բանասեր», Դ պրակ, Փարիզ, 1900, էջ 273--276.

² «Աղգաղական հանդես», XX, 1910, էջ 216:

³ «Հանդես ամսօրեայ», 1912, ապրիլ, էջ 255.

գրութիւնները միայն: Մասնավոր խոսակցութեան մեջ Հ. Անառնանը հայտնեց մեզ, որ ինքը 1912 թվականից հետո այլևս չի շարունակել այդ գործը, որովհետև նույն թվականին լույս է տեսել ազգագրագետ Ե. Լալայանի նման լուսանկարչամբ հայտարարութիւնը և ինքը կարծել է, որ Լալայանի կազմածը՝ ունեւնալով լուսանկարներ՝ կցված արձանագրութիւններին, ավելի կատարյալ գործ կլինի:

Ե. Լալայանի այդ հայտարարութիւնը լույս է տեսել «Ազգագրական հանդեսի»¹ 1912 թ. XXIII գրքի վերջում: այդտեղ ասվում է, որ 10 տարուց ի վեր ինքն զրադված է Հայկական արձանագրութիւնների ժողովածու կազմելու աշխատանքով, որը զարգարված կլինի արձանագրութիւնների բազմաթիվ լուսանկարներով: Ուստի խնդրում է թուրքին ուղարկել իրեն արձանագրութիւնների լուսանկարներ՝ վարձատրութեամբ կամ փոխանակային կարգով:

Ե. Լալայանի այդ աշխատութիւնը նույնպես մնաց անկատար. նա «Ազգագրական հանդեսի» մեջ զետեղված տեղագրական րաժնում արձանագրութիւններին երբեմն կցել է նաև լուսանկարներ, բայց դրանք այնքան էլ չառ չեն. ընդհանրապես Ե. Լալայանի հրատարակած արձանագրութիւնների մեծ մասը նույնպես քաղված են նախորդ հրատարակութիւններից, իսկ իր վերծանումները չեն կարող մրցել նախորդների հետ:

Հայերեն արձանագրութիւնների դիվան-Corpus կազմելու գործում մեծ աշխատանքներ է կատարել Ն. Մառը: Արդեն նշել ենք այդ ուղղութեամբ նրա վաստակի մասին՝ կապված Անիի պեղումների սկզբնավորման հետ, բայց Ն. Մառը իր բանասիրական ընդարձակ աշխատանքների մեջ ամենակարևոր նշանակութիւնը տալիս էր անցյալի մշակութիւն արտահայտութիւն հանդիսացող արձանագրութիւններին և, թերևս, ամենից ավելի զգում այն դժվարութիւնները, որոնք կապված էին այդ առաջնակարգ նյութի օգտագործման հետ, քանի որ նրանք ցրված էին բազմաթիվ գրքերի ու պարբերական մամուլի էջերում:

Կովկասյան արձանագրութիւնների՝ հայկական և վրացական Corpus-ներ կազմելու ուղղութեամբ Ն. Մառը գործնական քայլերի է դիմել 1903 թվականին: Ն. Մառի զեկուցագրի հիման վրա Կայսերական հնագիտական հանձնաժողովը որոշում է ընդունել այդ Corpus-ների հրատարակման գործն իր վրա վերցնել և հանձնարարել է Ն. Մառին Կովկասում հրավիրել խորհրդակցութիւն և մշակել սկզբունքներ ու աշխատանքային ծրագիր: Խորհրդակցութիւնը տեղի ունեցավ Թիֆլիսում, նույն 1903 թ. հունիսի 10-ին, թղթի վրա ամեն ինչ արվեց, բայց գործնական որևէ արդունք այնպես էլ երևան չեկավ: Հետագայում, Ն. Մառը հիշա կերպով բնորոշել է այդ անհաջողութեան պատճառները. ժամանակն աննպաստ էր ազգամիջյան կոլեկտիվ աշխատակցութեան համար և չկային էլ այդ ոգով աշխատելու ընդունակ գիտական կադրեր²:

Հետագայում, 10 տարի անց, տեղեկանալով, որ Կ. Կոստանյանցը կազմած ունի հայերեն արձանագրութիւնների մի ժողովածու՝ Ն. Մառը ստանում է այն և հրատարակում:

Ինչպես ինքը՝ կազմողը, նույնպես և աշխատութեան խմբագիր Ն. Մառը իրենց առաջաբաններում նշում են, որ այդ ժողովածուն իր ձևով, կազմելու սկզբունքներով և լուսանկարչութեամբ հետո է ժամանակի գիտական պահանջները բավարարող «Կորպուս» հասկացողութիւնից, բայց ավելի կատարյալը չլինելու պայմաններում, այն կարող է օգնել հետագոտողներին:

Կ. Կոստանյանցի կազմած ժողովածուի մեջ հավաքված են բազմաթիվ առանձին գրքերի և հոդվածների մեջ ցրված հայերեն արձանագրութիւնները և դասավորված են ժամանակագրական կարգով: Կազմողը դրանք տեղերում անձամբ չի համեմատել և ստուգել. հետևաբար նախկին հրատարակիչների բոլոր սխալ վերծանումները նույնութեամբ կրկնվել են նաև այս ժողովածուի մեջ. դեռ ավելին՝ Կոստանյանցը հարմար է համարել արձանա-

¹ Տե՛ս Ն. Մառի առաջաբանը Կ. Կոստանյանցի «Լիմական տարեգիր» ժողովածուի, էջ 10:

² «Լիմական տարեգիր», էջ 11: Այդ ձեռնարկութեան առթիվ եղան դրական արձագանքներ հայ մամուլում. տե՛ս «Արարատ», 1903, Ե, մայիս, էջ 463—465. Մերոպ Վարդապետի՝ հայերեն և վրացերեն արձանագրութիւնների ժողովածու-հոդվածը:

գրութիւնների սկզբից և վերջից կրնասել բովանդակության հետ իբրև կապ չունեցող՝ դիմումի և անեծքի լսանալիքը, որ իհարկւմ ճիշտ չէ: Ժողովածուն չունի ստուգող փաստաթուղթ (լուսանկար, Լաստապատ, գծագիր)։ արձանագրութիւնների տեղադրման առիթի բավարարվել է յուրաքանչյուրի տակ միայն բնակավայրի հիշատակումով՝ առանց նշելու արձանագրութիւնը պարունակող բուն հուշարձանի անունը, նրա ճիշտ վայրը և այլ մանրամասնութիւններ, որոնք շատ կարևոր են արձանագրության բովանդակության ճիշտ ըմբռնման համար: Յուրաքանչյուր արձանագրության տակ նշված է մատենագիտութիւնը, լայն այն լրիվ չէ: Ժողովածուից դուրս են մնացել մինչև 1913 թ. լույս տեսած բավական մեծ թվով արձանագրութիւններ և, վերջապես, բավական չունեցող արձանագրութիւնները գնահատված են զրբի վերջում, հավելվածի ձևով, որով միանգամայն կորցնում են իրենց արժեքը¹:

Թված այս լուր լացասական համգամանքների շնորհիվ Կոստանյանցի «Վիմակուն տարեգիր» ժողովածուն մեծ չափերով զրկվել է պատմաբանասիրական, կուլուր-մշակութային և լեզվաբանության պատմության համար արժեքավոր սկզբնաղբյուրների նշանակութիւնից, որ ունեն արձանագրութիւնները:

* * *

Սովետական իշխանության հաստատումով Հայաստանում հիմնականորեն վերացան լուր այն խոչընդոտները, որոնք արգելակում էին հայ բազմադարյան մշակութի ուսումնասիրմանը և հասարակական սեփականություն դարձնելու աշխատանքներին: Հայ ժողովրդի մտավոր կյանքի փարոս հանդիսացող գիտութիւնների ակադեմիայի ստեղծումով նոր վայր ստացավ նաև հայագիտութիւնը. հայոց լեզուն, գրականութիւնը, պատմութիւնը, հնագիտութիւնը, ազգագրութիւնը, արվեստը, հարտարապետութիւնը և բոլոր մյուս բնագավառներն այժմ ուսումնասիրվում են հատուկ ինստիտուտներում կենտրոնացած հարյուրավոր մասնագետների ջանքերով: Այդ աշխատանքների հաջողության համար առանձին կարևորութիւն ունի սկզբնաղբյուրների հայտնաբերումը, ուսումնասիրութիւնը և հրատարակութիւնը, ինչպես նյութական կուլտուրայի մնացորդների, այնպես էլ գրավոր աղբյուրների:

Վերջին տասնամյակներում հնագետների ջանքերով երկրի ընդերքից պեղվել և ուսումնասիրվել են հսկայական քանակությամբ նոր նյութեր, որոնք վերաբերում են Հայաստանի պատմության ու մշակութի բոլոր շրջաններին, իսկ Մխրթա Մաշտոցի անվան Մատենադարանը գիտության սեղանին է դրել մատենագրական ու փաստաթղթերի մեծածավալ հատորներ:

Հայագիտության այս ընդհանուր և բազմակողմանի աշխատանքների մեջ իր արժանի տեղն ունի նաև հայերեն արձանագրութիւնների հավաքման, ուսումնասիրման և Corpus-դիվանի ձևով հրատարակման գործը: Դեռևս 1938 թ., երբ Հայաստանում գոյություն ունեւ միութենական ակադեմիայի հայկական ֆիլիալ միայն, Հ. Օրբելու լացատրական զեկուցագրի հիման վրա Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը օգոստոսի 20-ի իր նիստում հատուկ որոշում կայացրեց և դրամական միջոցներ առանձնացրեց հայերեն արձանագրութիւնների դիվան հրատարակելու համար, սակայն համաշխարհային պատերազմը ժամանակավորապես արգելակեց դրա իրականացումը:

1954 թ. գիտութիւնների ակադեմիան կազմեց արձանագրագիտական մշտական գիտաբշավ², որը զինված տեխնիկական բոլոր միջոցներով մեկնում է շրջանները և հատուկ ծրագրով ու

¹ Եթե հուշարձանի վրա դրանց տեղագրութիւնը նշված լիներ, ապա մի մասի ժամանակը կարելի էր ճշգրտել՝ նրանից վեր կամ վար եղած արձանագրութիւնների թվականների հիման վրա: Որոշ մասի ժամանակն էլ հնարավոր է որոշել նրանց մեջ հիշատակված անձնանունների և դեպքերի ժամանակագրութիւնը օժանդակութեամբ: Այդ արձանագրութիւնների որոշ մասի ժամանակագրութիւնը կարելի էր ճշգրտել նաև հնագրական առանձնահատկութիւնների հիման վրա, եթե ժողովածուում տպված լինեին նրանց լուսանկարները կամ պատճենն արահայտող գծագրերը:

² Սկզբում պատմութիւն ինստիտուտին, հետագայում հնագիտութիւն և ազգագրութիւն ինստիտուտին էին:

մշակված մեքողներով հավաքում արձանագրությունները, անկախ այն բանից, նրանք նախկինում հրատարակված են թե ոչ: Իսկ այժմ արդեն հնագիտության և ազգագրության ինստիտուտին կից ստեղծված է արձանագրագիտական հատուկ սեկտոր, որի արամագրության տակ կան 4 հազարի հասնող հայերեն արձանագրություններ՝ տեղում վերանված, լուսանկարված և գծագրված: Բայց դա եղած հավաքչական աշխատանքի փոքր մասն է. դեռ որքան վայրեր կան, որոնք ապաստում են գիտաբանի տյեգեղությանը, Սովետական Հայաստանի շրջանների կեսից ավելին, հապա Արևմտյան Հայաստանը և գաղթավայրերը:

Հավաքչական աշխատանքին զուգընթաց հիմք է դրվել նաև հայերեն արձանագրությունների լրիվ ժողովածուի՝ դիվանի հրատարակությանը, արդեն լույս է տեսել մեկ հատորը (պրակ II), որի մեջ ամփոփված են պատմական Սյունիքի այժմյան երեք շրջանների՝ Գորիսի, Սիսիանի և Ղափանի արձանագրությունները. նույն աշխարհագրական սկզբունքով և մշակված մեքողներով պատրաստվում են այլ շրջանների արձանագրություններն ընդգրկող պրակները: Իսկ Անիի արձանագրությունների այս պրակը կազմում է դիվանի I պրակը, որը տեխնիկական պատճառներով լույս է տեսնում II պրակից հետո:

Հանգուցյալ ակադեմիկոս Հ. Օրբելին Անիի արձանագրությունների ժողովածուն կազմել է Անիի պեղումներին իր մասնակցության մեկ տասնամյակից ավելի տարիների ընթացքում. արամագրության տակ ունենալով և՛ երկար ժամանակ, և՛ տեխնիկական հարմարություններ, նա բազմաթիվ անգամներ նորից ստուգել ու նշան է կանգնեցրել տեղերը. երբ դրան ավելացնենք նաև նրա անսահման թմախոհությունն ու մեծ փորձը, ապա պարզ կլինի, թե որքան կատարյալ են արձանագրությունների վերանայումները:

Անիի արձանագրությունների զգալի մասը հրատարակված է շատ անգամներ ու տարբեր մարդկանց կողմից, բայց դրանք կատարվել են արագորեն շարժվող նամիտորների ձեռքով, առանց տեխնիկական հարմարությունների և, մասնավորապես, առանց լուսանկարահանման, այդ պատճառով էլ շատ մեծ թերություններով և սխալներով: Հ. Օրբելու հավաքածուն և՛ ստույգ է, և՛ լրիվ: Ինչպես ընդհանուր թիվը, այնպես էլ յուրաքանչյուր արձանագրության տակ նշված մասնագիտության օգնությամբ մի քանի արձանագրության համեմատությունը անմիջապես կհամոզի մասնագետ ընթերցողին մեր ասածների նշմարացիությունը:

Ինչպես Անիի արձանագրությունների, այնպես էլ մի շարք այլ վայրերի՝ Մրեն, Գանձասար և այլն ժողովածուներ գեռևս շատ վաղուց Հ. Օրբելու կողմից պատրաստված են եղել ապագրության համար, նույնիսկ ապարանում շարված և դրանց փորձնական օրինակները գտնվում են հանգուցյալ ակադեմիկոսի արխիվում. դրանք ապագրվելու էին Լենինգրադում, գիտությունների ակադեմիայի ապարանում: 1924 թվականին Նևա գետը դուրս գալով ասփրից հեղեղեց քաղաքի առափնյա մասերը և դրանց շարքում ակադեմիայի ապարանը, որի հետևանքով կորան և՛ շարվածքները, և՛ այն հատուկ հայերեն արձանագրական տառերը, որոնք մեծ ուսումնասիրության ու ջանքերի գնով ստեղծել էր անխնայ գիտնականը և իր իսկ ձեռքով շարել: Այդ առաձևերի վերականգնման հետ կապված դժվարությունները և զբաղվածությունը խանգարեցին Հ. Օրբելուն հրատարակելու այդ պատրաստի աշխատությունները:

1954 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիան որոշում ընդունեց հայերեն արձանագրությունների հավաքման և դիվանի հրատարակման համար, որի ընդհանուր ղեկավարն ու խորհրդատուն դարձավ Հ. Օրբելին էր: Նկատի ունենալով, որ նա ապրում է աշխատում էր Լենինգրադում, իսկ Դիվանը պետք է հրատարակվեր Երևանում, խնդրվեց Անիի արձանագրությունների ժողովածուն, որը լինելու էր Դիվանի առաջին պրակը, հանձնել մեզ՝ ապագրության պատրաստելու համար: Հ. Օրբելին սիրով ընդառաջեց այդ խնդրանքին:

Մեր սաացածը փորձնական այն օրինակներից մեկն էր, որ փրկվել էր ջրհեղեղից, ինչպես և նույն բարեբախտությամբ փրկված լուսանկարների 25 տախտակների լրիվ ապաքանակը:

Մեր սաացած այդ փորձնական օրինակի արձանագրությունների միայն կեսի չափն է եղել սրբագրված հեղինակի ձեռքով, բոլոր վերնագրերն ու բացատրական մասերը ապված են ռուսերեն, արձանագրությունների տակ չի եղել մասնագիտություն, ինչպես և որևէ

ցանկ: Այադ. Հ. Օրբելու «Հայերեն արձանագրությունների նշանակությունը» գեղեցիկ-դաստիարակությունը, որը կազմում է սույն պրակի ներածությունը. եղել է նույնպես ռուս-րեն. հերկս պրակի համար այն բարգմանել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտ. աշխատակից Ա. Ալադյանը:

Դիվանը պատրաստվել է ընդունված սկզբունքներով. իսկ նշված բոլոր լրացումներն ու յայդմանությունները կատարվել են մեր կողմից՝ Հ. Օրբելու ցուցումներով և համաձայնությամբ: Ժողովածուում խմբավորել ենք սարբեր տեղերում ցրված միևնույն հուշարձանի արձանագրությունները և զանազան աղբյուրներից առնելով՝ մի քանի արձանագրություններ ավելացրել: Այս բոլորը պատրաստի վիճակում տեսել և իր հավանությունն է տվել Հ. Օրբելին:

Ինչպես նշվեց, Հ. Օրբելին հայերեն վիճագիր արձանագրությունները հրատարակելու համար ստեղծել էր հատուկ տառանկներ. որոնցով և շարված են նրա բոլոր հրատարակած գործերը, նույնպես և կիսապատրաստ վիճակում եղածները, որոնց լիում՝ Անիի արձանագրությունների պրակը:

Նրբ ազգագրական նախաձեռնեց հրատարակելու. Դիվանը, սկսվեցին նրա անխնայական ձևավորման հարցերի քննարկումը: Այդ առթիվ որպես հիմնական ելակետ ընդունվեց Մանի և Հ. Օրբելու այն սկզբունքը, ըստ որի հրատարակության մեջ պետք է արտահայտվեն յուրաքանչյուր արձանագրության բուն գրչի գործածած գրչագրական բոլոր առանձնահատկությունները՝ այսինքն տառանկների ընդհանուր բնույթն ու ձևերը, որոնք յայտնաբերվում են տարբեր դարաշրջանների գրչության ոճերը, ապա աշխարհագրական ու մշակութային տարբեր կենտրոններում առաջացած առանձնահատկությունները, և վերջապես գրիչների վարպետության աստիճանի և գեղագրության ու նախադրության հետ կապված առանձնահատկությունները: Այս հարցում մեծ նշանակություն ունեն հատկապես տառերի միացումները կամ կցումները (связка), որոնց թիվը մի քանի հարյուրի է հասնում և որոնք վերծանության, հատկապես հատուկ անունների ժամանակ խիստ կարևոր են:

Այս նյակետից մոտենալով հարցին՝ պարզվեց, որ ստեղծված տառանկները չեն կարող լիովին բավարարել առաջադրվող պահանջները: Դրանք հիմնականում մեկ տեսակի տառեր են և բավարարում են միայն պահանջներից մեկին՝ կցումների արտահայտությանը, բայց այս դեպքում էլ նրանք լրացման կարիք ունեն, որովհետև նրանց ստեղծումից հետո հայտնաբերվել են հարյուրի հասնող կցման նոր ձևեր, և վերջապես այդ տառանկների ամբողջ ռուվածքը, ինչպես նշվեց վերևում՝ ոչնչացվել է նրանի ջրհեղեղի հետևանքով:

Ինչպես ընդհանուր, այնպես էլ հայ վիճագրական հուշարձանների հրատարակման ընթացքում վաղուց ի վեր կիրառվել է նաև մի այլ միջոց. դա արձանագրությունների առանձնահատկությունները գծագրական նշանակով արտահայտելու ձևն է: Մեր հին հրատարակիչներն այդ ձևին դիմել են մի քանի դեպքերում. երբ արձանագրությունը գծվար է վերծանվում և կարող է այլ կերպ ևս վերծանվել՝ կցումների և փակագրերի խնդրման հետևանքով, կամ երբ ցանկացել են խիստ գեղագիր տառերով գրվածները ներկայացնել որպես գեղագրական կարևոր նմուշ և այլն: Հնում այդպիսի գծագրեր պատրաստելը բանկ էր, իսկ ներկայումս, հաշվումները պարզեցին, որ նման ցիկնոգրաֆիական աշխատանքներն ավելի էժան են, քան արձանագրությունների բնագրերի սովորական կամ հատուկ տառերով շարվածք կատարելը: Նկատի ունենալով այս հանգամանքը, նպատակահարմար է համարվել հատուկ տառանկների վախճանը գծագիր-պատկերի մեթոդին դիմել, որը հնարավորություն է բնականում արձանագրությունների թե՛ ընդհանուր և թե՛ առանձին գրերի ու կցումների բոլոր առանձնահատկությունները նշողորեն արտահայտել և պահպանելով նրանց «անհատականությունը»՝ տեղագրել արձանագրության մեջ: Այս առթիվ ևս Հ. Օրբելին տվել է իր համաձայնությունը:

Արձանագրությունների հրատարակման հարցում նման «բծախնդրության» պատճառները շատ պարզ են: Արձանագրությունները գտնվում են քարե մեծամեծ հուշարձանների վրա կամ շենքերի պատերին, բաց դաշտերում՝ ենթակա բնական ու չարամիտ պատահարների: Նրանք դարերի ընթացքում քայքայվում, ոչնչանում են. տեղահան անել և թան-

զարաճեցին քերի հնարավոր չէ. ոչ էլ թույլատրելի. շատ շատերը հիմնովին կամ մասամբ արդեն ոչնչացել են, մեացածներին էլ վաղ րժ ուշ նույն բախտն է վիճակված. այդ պատճառով էլ նրանց ստույգ պատկերները գծագրերի և լուսանկարների ձևով պետք է մի անգամ րդրին հաճանել, որպեսզի այդ միջոցով փրկվեն վերջնական կորստից:

Հ. Օրբելին արձանագրությունների վայրի բացատրական մասում Անիի և կեղեցիները կոչել է դրանց շինությանը կամ ընդհանրապես հովանավորող մարդկանց անուններով: Այլ հրաաարակությունների մեջ և կեղեցիները կոչված են իրենց անուններով, այսինքն այն արբերի, որոնց անվանը նվիրված են դրանք: Ընթերցողին ավելորդ պրպտումներից ազատելու համար Հ. Օրբելու բնագիրը պահպանելով նույնությամբ, «Բովանդակության» մեջ դրանցից յուրաքանչյուրի դիմաց նշանակել ենք նաև և կեղեցիների բուն անունները:

Յուրաքանչյուր արձանագրության տակ հոռմեական թվանշաններով նշված են դրանց լուսանկարների տեղադրված աախուսակների համարները:

Ս. ԲԱՐՍՈՒԴԱՐԵԱՆ